
Հումանիտար գիտություններ №-2 (40) 2021 Гуманитарные науки

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԵԹՈԴԻԿԱՆ ԿԵԼՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԹԱՆԳԱՍՅԱՆ Տ.Վ., ԶԱԽԱՐՅԱՆ Ն.Ս.

Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail:

Հոդվածում անդրադարձ է կատարվել կենսաբանության դասերի ընթացքում սովորողների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման տեսական եվ մեթոդական առանձնահատկությունների և մեթոդամանկավարժական հետազոտության իրականացման նոր մոտեցումներին, որի նպատակն է ցույց տալ, որ ուսուցման գործընթացում ճանաչողական հետաքրքրությունները զարգացնող մեթոդներն արդյունավետ են և մեծ նշանակություն ունեն ուսումնական նյութն ավելի հեշտ, պատկերավոր ընկալելու գործում:

Հիմնաբառեր. կոմպետենցիա, ճանաչողական հետաքրքրություններ, մոտիվացիա:

Ներկայացված է տպագրության 26.05.2021թ.

Ժամանակակից կրթական համակարգը հիմնվում է կոմպետենցիաների ձևավորման վրա: Կրթության այս մոդելը նկարագրում է, թե ինչին պետք է տիրապետի ուսուցիչը, ինչ գործառույթներ պետք է իրականացնի, որքանով պետք է պատրաստ լինի մասնագիտական պարտականությունների կատարման համար և այլն: Կոմպետենտությունը ենթադրում է համապիտանի գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, ընդունակություններ և անձնային որակներ: Կոմպետենտությունը կոնկրետ անձի կողմից կոմպետենցիաների համակարգի յուրացումն է: Կոմպետենցիան սովորողի՝ գործունեության ընթացքում առարկայացված իրազեկությունն է, գիտելիքների, կարողությունների, անձնային որակների, գործնական փորձառության համակարգը, որն էլ որոշում է անձի՝ գործունեությանը պատրաստ լինելը: Սովորողների պատրաստվածությանը ներկայացվող որակական պահանջները և հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը սահմանելիս պետք է հաշվի առնել մի շարք կոմպետենցիաներ: Դրանց թվին է դասվում նաև ճանաչողական

հետաքրքրությունը, որպես կենսաբանության ուսուցչի մասնագիտական կոմպետենցիա, որի ձևավորումն ու զարգացումն ապահովվում է հանրակրթության ընդհանուր ծրագրերով իրականացվող ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքում [3, էջ 95-96]:

Կենսաբանության ուսուցման հաջողությունը մեծապես կախված է ուսուցման տարբեր փուլերում իրականացվող ճանաչողական գործունեությունից: Հետաքրքիր է, որ եթե սովորողը պատկերացում չկազմի, թե ինչու է կարևոր սովորել այս կամ այն կենսաբանական նյութը, չի ունենա ցանկություն այն սովորելու: Այսինքն, ուսուցիչը նախքան դասը կազմակերպելը, պետք է հոգա, որ աշակերտների մոտ ստեղծվի տվյալ նյութը սովորելու շարժառիթ, այսինքն պետք է շարժի սովորողների հետաքրքրությունը:

Մոտիվը կամ շարժառիթը արտաքին խթանող ազդակ է, որը ստիպում է մարդուն իրականացնել որոշակի գործողություն [4, էջ 45-46]:

Ն.Պ. Մորզովան գտնում է, որ սովորողի հետաքրքրությունը կարելի է շարժել՝

1. գործունեության նկատմամբ դրական զգացմունք առաջացնելով,
2. ուրախությամբ սովորելու և իմանալու պատրաստականության ստեղծումով,
3. որոշակի շարժառիթի ստեղծումով, որը հիմք կհանդիսանա այլ դրդապատճառներից անկախ՝ սովորողին ուսումնական գործունեության մեջ ներգրավելու համար [2, էջ 366-367]:

Ճանաչողական հետաքրքրության զարգացումն իրենից ներկայացնում է միմյանց հետ փոխկապակցված տարրերով բարդ և բազմափուլ գործընթաց: Գ.Ի. Շչուկինյան իր «Ճանաչողական հետաքրքրության խնդիրը որպես կենտրոնական օղակ գաղափարների համակարգում» աշխատության մեջ կարևորում է ճանաչողական հետաքրքրության զարգացման հետևյալ հաջորդական փուլերը՝


1. **հետաքրքրության**, որը նախնական փուլն է և ուղղված է արտաքին, երբեմն նաև անսպասելի և անսովոր հանգամանքների օգնությամբ սովորողների ուշադրությունը գրավելուն: Դա կարող է ծառայել որպես խթան երեխայի հետաքրքրությունը գրավելու և ուշադրությունը կենտրոնացնելու համար,
2. **հետաքրքրասիրության**, որն իրենից ներկայացնում է անձի ցանկությունը ներթափանցելու իր տեսած կամ լսած այս կամ այն երևույթի սահմանները: Այս փուլում ճանաչողության զարգացումն արտահայտվում է հուզական դրսևորմամբ, զարմանքի, ուրախության և այլնի արտահայտմամբ,
3. **ճանաչողական շարժառիթների**, որոնք կարևոր տեղ են զբաղեցնում և նպաստում են սովորողի ներթափանցմանը ուսումնասիրվող երևույթի մեջ,
4. **տեսական հետաքրքրության**, երբ սովորողների ունեցած տեսական հարցերն օգտագործվում են որպես ուսուցման գործիք [1, էջ 381-382]:

Մեր կողմից իրականացված մեթոդամանկավարժական հետազոտության համար, որպես օբյեկտ ընտրել ենք Արարատի մարզի Ոսկետափ գյուղի Սարգիս Հովհաննիսյանի անվան


թիվ 1 հիմնական դպրոցի 7-րդ Ա դասարանը: Հետազոտության համար ուսումնասիրել ենք 7-րդ դասարանի կենսաբանության դասագիրքը, ուսումնական պլանը, ուսուցչի ձեռնարկը և լրացուցիչ գրականություն:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք մեր կողմից մշակված մեթոդիկա, որն ուղղված է եղել սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը:

Բերենք սովորողների ճանաչողական հետաքրքրությունների զարգացմանը նպաստող, մեր կողմից կազմած տեսաճանաչողական համակարգերի մի քանի օրինակներ (նկ. 1, նկ.2):



Նկ.1 Տարբեր կենսակերպ վարող կենդանիներ




Նկ.2 Երկկենցաղներ

Նկար 1-ում սովորողները համեմատության պայմաններում կճանաչեն և կտեղեկանան ցամաքային, ջրային և ջրացամաքային կենսակերպ վարող կենդանիներին, իսկ նկար 2-ում սովորողները նույն կերպ կձանոթանան արտասովոր երկկենցաղներին և նրանց բնահարմարվածությանը:

Փորձի ընթացքում ստուգել ենք հետազոտվող դասարանի աշակերտների ելակետային առաջադիմությունը: Հետազոտությունն իրականացրել ենք մի շարք դասավանդումների անցկացման հիման վրա: Իրականացրել ենք մի շարք թեմաների դասավանդումներ, որոնց մի մասն առանց ճանաչողական հետաքրքրությունները զարգացնող մեթոդների կիրառման, իսկ մյուս մասը՝ ճանաչողական հետաքրքրությունները զարգացնող մեթոդների կիրառմամբ: Վերջում հաշվել ենք սովորողների ստացած գնահատականների միջինները՝ մի դեպքում ելակետային գնահատականների (M_1), մյուս դեպքում առանց ճանաչողական հետաքրքրությունը զարգացնող մեթոդների կիրառման (M_2), և իհարկե այդ մեթոդների կիրառմամբ դասերից ստացած գնահատականների (M_3):

Տրամագիր 1-ում բերվում է ուսումնասիրության ամփոփ տվյալները:



Տրամագիր 1. Ճանաչողական ակտիվության ցուցանիշներն ըստ տարբերակների

Տրամագրից հետևում է, որ ճանաչողական հետաքրքրությունը զարգացնող մեթոդներով վարած դասերն ավելի արդյունավետ են. նման մեթոդներով վարած դասերի արդյունքները համեմատելով ելակետային և առանց այդ մեթոդների կիրառման դասերի հետ տեսնում ենք, որ սովորողների ստացած միջին գնահատականը 1 միավորով բարձրացել է՝ շնորհիվ կիրառված այն մեթոդների, որոնք նպատակաուղղված են եղել զարգացնելու սովորողների ճանաչողական հետաքրքրությունները:

Այսպիսով, մեր կողմից իրականացված մեթոդամանկավարժական հետազոտությունից հետո հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

Կենսաբանության ուսուցման գործընթացում ճանաչողական հետաքրքրությունները զարգացնող մեթոդները նպաստում են սովորողների կողմից նյութի ավելի հեշտ, պատկերավոր և մատչելի կերպով յուրացմանը, նոր գիտելիքների ձեռքբերմանը, պրակտիկ և ստեղծագործական կարողությունների զարգացմանը, մտածողության խթանմանը, ինքնուրույն և տրամաբանական եզրահանգումներ կատարելուն:

Ճանաչողական հետաքրքրությունը զարգացնող մեթոդներով վարած դասերի արդյունքները համեմատելով ելակետային և առանց այդ մեթոդների կիրառման դասերի հետ տեսնում ենք, որ սովորողների ստացած միջին գնահատականը 1 միավորով բարձրացել է՝ շնորհիվ կիրառված այն մեթոդների, որոնք նպատակաուղղված են եղել զարգացնելու սովորողների ճանաչողական հետաքրքրությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Едиханова Г. Г. Формирование познавательных интересов обучающихся // Молодой ученый. — 2016. — №30, стр. 381-383
2. Пологрудова И. С. Теоретические подходы к изучению «познавательного интереса» в психолого-педагогической литературе // Молодой ученый. — 2012. — №4. стр. 366-367
3. Пономарева И.Н., Соломин В.П., Сидельникова Г.Д. Общая методика обучения биологии, 3-е изд., стер. — М.: Издательский центр «Академия», 2008. — стр. 280. стр. 95-96
4. Якунчев М.А., Волкова О.Н., Аксенова О.Н. и др. Методика преподавания биологии-2008, стр.320. стр 45-46, 48, 50

РЕЗЮМЕ

МЕТОДИКА РАЗВИТИЯ ПОЗНАВАТЕЛЬНЫХ ИНТЕРЕСОВ УЧАЩИХСЯ ПРИ ОБУЧЕНИИ БИОЛОГИИ

ТАНГАМЯН Т.В., ЗАХАРЯН Н.С.

В статье рассматриваются теоретико-методологические особенности развития интересов на уроках биологии, новые подходы к проведению методолгических и педагогических исследований, целью которых является показать методы, которые развивают интересы в процессе обучения, эффективны и имеют большое значение для облегчения учебного материала.

Ключевые слова: компетентность, познавательные интересы, мотивация.

SUMMARY

THE METHODOLOGY OF THE DEVELOPMENT OF STUDENTS' COGNITIVE INTERESTS IN THE TEACHING OF BIOLOGY

TANGAMYAN T.V., ZAKHARYAN N.S.

The article touched upon the theoretical methodological of the formation of cognitive intentives of biology students during biology classes and the new approoaches to conducting metodological and pedagogical research, which goal is to show that methods of developing cognitive interests are effective during the educational process and have an important role to make the learning material easier and more effective.

The development of cognitive interest is a complex, multi-stage process with interconnected elements. G.I. Shchukina in her work "The Problem of Cognitive Interest as a Central Link in the System of Ideas", identifies the following stages in the development of cognitive interest:

1. The interest, which is the initial stage, is aimed at attracting students' attention with the help of external, sometimes unexpected, unusual circumstances. It can serve as a stimulus for the child to be interested and focused,
2. Curiosity, which is the desire of a person to penetrate the boundaries of this or that event he/she has seen or heard. At this stage, the development of cognition is expressed through emotional expression, surprise, joy, etc.
3. Cognitive motivations, which play an important role, contribute to the learner's penetration into the studied phenomenon.
4. Theoretical interest, when students' theoretical questions are used as a teaching tool.

Key words: competence, cognitive interests, motivation.

Տպագրության է երաշխավորել մանկ. գիտ.թեկնածու, դոցենտ Հ. Հ. Մարգարյանը 24.06.
2021թ.